ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 56-Ն

<< 22 >> դեկտեմբերի 2016 թվական

գյուղ Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 31-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի 2015-2018 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> թիվ 31-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Դեմ՝ 0 Կողմ՝ 6 Ձեռնպահ՝ 0

Ա. Կարոյան կողմ .....
Ռ. Հակոբյան կողմ .....
Ռ. Հարությունյան կողմ .....
Ա. Վարդանյան կողմ .....
Գ. Վարդանյան կողմ .....
Ա. Տեփանոսյան կողմ .....

Անուշավանի համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

<<22>> դեկտեմբերի 2016 թվական
Գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Երվանդ Հակոբյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքիավագանու 22 դեկտեմբերի 2016 թվականի թիվ 56-Ն որոշմամբ

ԱՆՈՒՇԱՎԱՆ 2016թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք ..... Error! Bookmark not defined.

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 3

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 3

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը 7

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը ..... Error! Bookmark not defined.

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 10

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ..... Error! Bookmark not defined.

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 11

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 13

3.1. Համայնքի զարգացման տեսլական 13

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ ..... Error! Bookmark not defined.

4. ՀՀԶԾ ֆինանսավորում ..... Error! Bookmark not defined.

5. ՀՀԶԾ մոնիթորինգ ..... Error! Bookmark not defined.

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն

1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

ՀՀ Շիրակի մարզի Անուշավան համայնքը գտնվում է Շիրակի մարզում՝ Հայաստանի հյուսիս-արևմտյան կողմում: Գյուղի վարչական տարածքը սահմանակից է Փանիկ, Նոր-Կյանք, Գետափ, Սարալանջ, Արթիկ համայնքների վարչական տարածքներին: Ծովի մակերևույթից բարձրությունը՝ 1750մ:

Գյուղը հիմնադրվել է 18-րդ դարի երկրորդ կեսին՝ Ալաշկերտից և Բասենից գաղթած հայերի կողմից: Սկզբում անվանվել է Մուղալես, Բեքյանդ, Փոքր Պարնի 1966թ-ից՝ Անուշավան:

Համայնքի վարչական տարածքը 1160հա է, կլիմայական պայմանները՝ բարենպաստ, հացահատիկային, բանջար-բոստանային մշակաբույսերի և պտղի արտադրության համար: Գյուղի բնակչությունը 2016թ-ի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2146մարդ այդ թվում տղամարդիկ 1082, կանայք՝ 1064: Հեռավորությունը Երևանից՝ 100կմ, մարզկենտրոնից՝ 25կմ, նախկին Արթիկի շրջկենտրոնից՝ 6կմ:

Աղյուսակ 1. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները

(01.01.2016թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	2146
	Տղամարդիկ	1082
	Կանայք	1064
	0-4 տարեկան	160
	5-6 տարեկան	66
	7-10 տարեկան	89
	11-14 տարեկան	125
	15-17 տարեկան	88
	18-22 տարեկան	152

	23-45 տարեկան	562
	46-62 տարեկան	636
	63 և բարձր տարիքի	268
2	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	
	Տարիքային և աշխատանքային	274
3	Փախստականներ	-
4	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	7
5	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-
6	Հայրենական պատերազմի մասնակիցներ	-
7	Արցախյան պատերազմի մասնակիցներ	11
8	Հաշմանդամներ, այդ թվում՝	162
9	Մանկուց հաշմանդամներ	6
10	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	101
11	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	1
12	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում	-
13	Անօթևան ընտանիքներ	-
14	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	-
15	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	385
16	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	420

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Անուշավանի համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացվում է երկու մակարդակներում՝

ա/ Համայնքի ղեկավար

բ/ Համայնքի ավագանի

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, իրավունքների և պարտականությունների կարգը սահմանված է «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքով:

Համայնքի ղեկավարն իր գործունեությունն իրականացնում է իր և իր աշխատակազմի միջոցով, որի իրավունքների և պարտականությունների խնդիրը համակարգվում համապատասխան կանոնադրությամբ և «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքով:

Անուշավանի համայնքի ղեկավարի աշխատակազմի բնութագիրը բերվում է ստորև՝

Հ/հ	Տվյալներ / Անուն, ազգանուն	ծննդ թիվը	Կրթություն	Մասնագ.	Զբաղ. պաշտ.	ՏԻՄ աշխ փորձ
1	Երվանդ Հակոբյան	1959	բարձրագ.	տնտեսագետ	համայնքի ղեկավար	15
2	Աննա Աղաբաբյան	1982	բարձրագ.	տնտեսագետ	Աշխատակազմի քարտուղար	2
3	Հրաչյա Ղահրամանյան	1958	բարձրագ.	տնտեսագետ	գլխավոր մասնագետ	16
	Ռոբերտ Վարդանյան	1990	բարձրագ	իրավագետ	1-ին կարգի մասնագետ	1
4	Միքայել Դավթյան	1964	միջն. մասն.	տեխնիկ-մեխանիկ	1-ին կարգի մասնագետ	9
5	Ազատուհի Խաչատրյան	1991	բարձրագ	բանասեր	2-րդ կարգի մասնագետ	1

Անուշավանի համայնքի ավագանին ընտրվել է 2015թ-ի դեկտեմբերի 22-ին: Համայնքի ավագանին կազմված է յոթ անդամներից:

Համայնքի ավագանին, ելնելով համայնքի շահերից, համայնքի ղեկավարի հետ իրականացնում է որոշակի աշխատանքներ: Անուշավանի համայնքի ավագանին բարձր պատասխանատվությամբ է վերաբերվում համայնքի բյուջեի ձևավորման, բյուջեի կատարման, ծախսային մասերը հասարակությանը ներկայացնելու և դրանք վերահսկելու իր պարտականություններին:

Ներկայացնում ենք համառոտ տեղեկատվություն Անուշավանի համայնքի ավագանու մասին:

Հ/հ	Տվյալներ / Անուն, ազգանուն	Կրթություն	Մասնագիտություն	ՏԻՄ-ում աշխատանք. փորձը
1	Մանե Բայադյան	բարձրագույն	դեղագետ	1
2	Աշոտ Կարոյան	միջնակարգ	մեխանիզատոր	15
3	Ռոզա Հակոբյան	բարձրագույն	ուսուցչուհի	1
4	Ռաֆիկ Հարությունյան	միջնակարգ	գազի հսկիչ	8
5	Անդրանիկ Վարդանյան	միջնակարգ	մեխանիզատոր	5
6	Գնել Վարդանյան	միջն. մասն.	ռադիոտեխնիկ	8
7	Արմեն Տեփանոսյան	բարձրագույն	ատոմնատեխնիկ	1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքայ ին միավոր	Հաստիքի քանակը
1	Նախադպրոցական հիմնարկի տնօրեն	1	1
2	Դաստիարակ	6	6
3	Երաժշտության դասատու	1	1
4	Բուժքույր	1	1
5	Խոհարար	1	1
6	Դայակ	3	3
7	Հաշվապահ	1	1
8	Օժանդակ բանվոր	1	1
ընդամենը			15

Անուշավանի համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբ կայքը՝ www.Anushavan.am, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված

հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Սակայն, կայքում տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվության առկայությունը դեռևս հեռու է բավարար լինելուց և անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը: Համայնքապետարանում և բնակավայրերի կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Համայնքում 2016թվականի ապրիլի 12-ի թիվ 15-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը և հետևյալ անհատական կազմը.

1/ Աղաբաբյան Աննա - աշխատակազմի քարտուղար
2/ Ղահրամանյան Հրաչյա - աշխատակազմի գլխ. մասնագետ- հաշվապահ
3/ Վարդանյան Ռոբերտ - աշխատակազմի առաջին կարգի մասնագետ
4/ ՍարոյանՕվսաննա - «Անուշավանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ տնօրեն
5/ Հակոբյան Կարո - «Անուշավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ փոխտնօրեն
6/ Տեփանոսյան Արմեն - ավագանու անդամ
7/ Վարդանյան Անդրանիկ - ավագանու անդամ

1.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն

	2016	2017	2018	2019	2020
Հազ.դրամ	46207,6	46800,0	47600,0	48200,0	48900,0

- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը (%)

	2016	2017	2018	2019	2020
Հազ. դրամ	9476,0	9770,0	10130,0	10500,0	10900,0
Սեփ.եկամ.բաժին	20,5	20,9	21,3	21,8	22,3

- Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները, հիմնական սպառման շուկաներ

-Համայնքի բնակչությանը սեփականաշնորհված 563հա վարելահողերը, 130հա տնամերձերը և 37,8հա վարձակալությամբ տրված վարելահողերը հիմնականում զբաղված են հացահատիկային, կերային մշակաբույսերով: Հողատարածքների դիրքաղրությունը նպաստավոր է վերոնշյալ կուլտուրաների մշակության համար: Տնամերձերում հիմնականում մշակվում են կարտոֆիլ և բանջար-բոստանային կուլտուրաներ: Մշակվում է նաև ընդավոր և կորիզավոր, պտղատու կուլտուրաներ, սակայն դեռևս ցածր է պտղի արտադրության տնտեսական զարգացման տեմպերը, սակայն ինչպես պտղաբուծությունը, այնպես էլ անասնապահությունը, հանդիսանում են Անուշավան համայնքի տնտեսական զարգացում կանխորոշող ոլորտներ: Այս ոլորտների ցածր զարգացվածության տեմպը հիմնականում պայմանավորված է համայնք մատակարավող ոռոգման ջրի սկավությունից և ոռոգման ներքին ցանցի մաշվածությունից, ինչպես նաև վերոնշյալ մթերքների իրացման շուկաների և վերամշակող ձեռնարկությունների բացակայությամբ: Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտում են նաև շահագործվող տեխնիկայի պարկի մաշվածությունը, ցածր արտադրողականությունը, ինչպես նաև վաղ-աշնանային ցրտահարությունը և հաճախակի կրկնվող ուժեղ քամիներն ու կարկտահարությունը:

2015թվականին համայնքում տեղադրվել են 3 հակակարկտային կայաններ, որոնք ապահովում են 250-300հա ծածկույթ, որը ապահովում է համայնքի տարածքի 25-30 %-ը: Հետագա մինչև 2020թվականը նախատեսվում է համայնքի բյուջեի և համայնքի բնակչության ներդրումների հաշվին տեղադրել ևս 3 կայան, որը կապահովի 70-80% ծածկույթ:

Անասնապահությամբ զբաղվող խոշոր ֆերմերային տնտեսություն համայնքում չկան: Թռչնապահությունը հիմնականում ապահովում է համայնքի ազգաբնակչության սպառման պահանջները:

Գյուղատնտեսական արտադրանքի ավելցուկը հիմնականում իրացվում է Արթիկ և Գյումրի քաղաքների շուկաներում:

Աղյուսակ համայնքի հողային հաշվեկշիռը

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1	Համայնքի վարչական տարածքը (հա), որից	1134,52
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր(հա), այդ թվում՝	912,26
3	Արոտավայր	282,51
4	վարելահողեր	600,78
5	խոտհարք	-
6	Պտղատու այգի	1,0
7	Այլ հողեր	27,97
8	Բնակավայրերի հողեր (հա), որից	163,29
9	Բնակելի կառուցապատման	130,68
10	Հասարակական կառուցապատման	3,2
11	Խառը կառուցապատման	-
12	Ընդհանուր օգտագործման	20,24
13	Այլ հողեր	9,17
14	Արտադրական նշանակության հողեր (հա)	25,72
15	Էներգետիկայի տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողեր (հա)	16,21
16	Անտառային հողեր (հա)	-
17	Հատուկ պահպանության հողեր (հա)	12,31
18	Հատուկ նշանակության հողեր (հա)	-
19	Ջրային հողեր (հա)	4,73

- Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմամշակութային հուշարձաններ

-Անուշավան համայնքում զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմամշակութային և բնական հուշարձաններ չկան:

- Դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններ

Աղյուսակ, դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների

Հ/հ	Համայնքի անվանումը	Հաճախողների թիվը	Քանի հոգու համար է նախատեսված	Այլ նշումներ
1	<<Անուշավանի նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ	90	120	Տանիքը և 2-րդ հարկը ունեն վերանորոգման կարիք
2	<<Անուշավանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	257	450	

- Առողջապահական հաստատություններ (ըստ տեսակների)

- Համայնքում գործում է բուժ-մանկաբարձական կետ, որը անմիջականորեն գտնվում է <<Փանիկի առողջության կենտրոն>> ՊՈԱԿի ենթակայության տակ և սպասարկում է Անուշավան համայնքի ազգաբնակչությանը:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ

-Համայնքից ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են ընտանիք:

- Բնակարանային տնտեսություն

-Համայնքի բնակարանային ֆոնդը կազմում է 86 915քմ կամ 486 բնակելի միավոր, որից 100%-ը հանդիսանում է համայնքի բնակչության անձնական սեփականությունը:

1.1. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Անուշավան համայնքի բյուջեն

N	Եկամտային մաս	2015թ	2016 թ.	2017 թ.	2018 թ.	2019թ	2020 թ	2021թ
		Փաստ.	նախ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
	Եկամուտներ ընդամենը	46827,1	45600,9	46207,6	46800,0	47600,0	48200,0	48900,0

1	Հարկային եկամուտներ ու տուրքեր	7913,0	8055,9	8306,0	8565,0	8765,0	8965,0	9065,0
1.1	Հողի հարկ	3352,7	3322,3	3327,5	3325,0	3325,0	3325,0	3325,0
1.2	Գույքահարկ	4438,5	4643,6	4438,5	4600,0	4800,0	5000,0	5200,0
1.3	Տեղական տուրքեր	71,0	90,0	540,0	640,0	640,0	640,0	740,0
1.4	Ոչ հարկային եկամուտներ	1032,0	1020,0	1170,0	1200,0	1200,0	1200,0	1200,0
2	Պահուստի հողերի վճարներ	1032,0	1020,0	1170,0	1200,0	1200,0	1200,0	1200,0
2.1	Գույքի վարձակալության վճարներ	-						
2.2	Տեղական վճարներ	-						
2.3	Այլ ոչ հարկային եկամուտներ	-						
3.	Պաշտոնական տրանսֆերտներ	42282,1	36525,0	36731,6	37035,0	37635	38035,0	38635,0
4.	Տարեսկզբի ազատ մնացորդ							

2.1.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների

(ՈՒԹՀՍ) վերլուծություն

- Համայնքի ուժեղ կողմերը
  - ✓ Համայնքի աշխարհագրական դիրքը, Արթիկ և Գյումրի քաղաքների մոտիկությունը,
  - ✓ Անուշավանի նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի առկայությունը
  - ✓ Անուշավանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի առկայությունը
  - ✓ Հացահատիկային, բանջարաբոստանային կուլտուրաների և պտղի արտադրության համար բնակլիմայական բարենպաստ պայմանները

- ✓ Մարդկային և աշխատանքային ռեսուրսների առկայությունը
- ✓ Համայնքում ֆիքսված նորագույն տեխնոլոգիաներով զինված կապի, ինչպես նաև բջջային կապի առկայությունը
- ✓ Համայնքի 90% գազաֆիկացված լինելու հանգամանքը

- Համայնքի թույլ կողմերը
  - ✓ Աշխատատեղերի պակասը,
  - ✓ Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը,
  - ✓ Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը,
  - ✓ Գործազրկության առկայությունը երիտասարդության շրջանում,
  - ✓ Մարզական և մշակութային ենթակառուցվածքների բացակայությունը,
  - ✓ Գործարար միջավայրի բացակայությունը,
  - ✓ Բնական աղետներ՝ կարկտահարություն, երաշտ, սելավներ, պտտահողմեր,
  - ✓ Ոռոգման ջրի միջհամայնքյաի և ներհամայնքային անբավարար ցանցը:

- Հնարավորություններ
  - ✓ Ոռոգման համակարգի ենթակառուցվածքների բարելավման միջոցով դաշտավարության, պտղաբուծության, կարտոֆիլի արտադրության ծավալների ընդլայնման հնարավորություն;
  - ✓ Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման արտադրության խթանում:

- Սպառնալիքները
  - ✓ Բնական տարերային աղետների՝ երկրաշարժ, կարկտահարություն, ուժեղ քամիներ, ցրտահարություն, երաշտ, հրդեհներ, պատճառած վնասը:
  - ✓ Երիտասարդության շրջանում գործազրկության աճող տեմպը,
  - ✓ Արտագաղթի, հատկապես երիտասարդ ընտանիքների ժողովրդագրության բացասական հաշվեկշիռը,

- ✓ Գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունները

2. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

2.1. Համայնքի զարգացման տեսլական

Շիրակի մարզի Անուշավան համայնքը սոցիալ-տնտեսական բնականոն զարգացում ապահովող համայնք է: Հաշվի առնելով գյուղատնտեսության առևտրի և ծառայությունների, ինչպես նաև ազգաբնակչության պետենցիալ հնարավորությունները՝ նշված տեսլականի հասնելու համար համայնքը որդեգրել է.

- ✓ Տարեց-տարի ավելացնել համայնքի ֆինանսական դրությունը, սեփական եկամուտների և բարեգործական հիմնադրամներից ներգրավվելիք միջոցների հաշվին ապահովել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը,
- ✓ Խթանել ձեռներեցությունը,
- ✓ Խթանել շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, անհատ նախաձեռնողների, բարեգործական կազմակերպությունների, նրանց ներգրավմամբ իրականացնել բարեփոխումներ, որը կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- ✓ Էլ ավելի զարգացնել համագործակցությունը համայնքի ազգաբնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների, բարեգործական հմնադրամների, գործարարների և անհատ բարերարների հետ:
- ✓ Նպաստել համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- ✓ Ռացիոնալ օգտագործել առկա ռեսուրսները,
- ✓ Զարգացնել գյուղատնտեսությունը, առևտրի և սպասարկման ոլորտները,
- ✓ Էլ ավելի բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակները:

- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքներ հարաբերությունը համայնքի ընդհանուր թվին կազմում է 40%:
- Համայնքի եկամուտների տարեկան աճ նախատեսել 5%:

- Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխություն արտագաղթի և աշխատատեղերի ստեղծման պայմաններում տարեկան 6%:

Աղյուսակ ՀԶՀԾ-ում ընդգրկելու համար Անուշավան համայնքի ավագանու և ԽՄ-ի կողմից առաջարկվող ծրագրերի ցանկ

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
	ՏԻՄ-երի լիազորություններ	
1	Հակակարկտային կայանք 1հատ	3200,0
2	Ներհամայնքային 29-րդ փողոցի տուֆ քարով կառուցում 600մ^2	3000,0
3	Անուշավանի մշակույթի տան ժամանցի սենյակի նորոգում և կահավորում 1 սենյակ	500,0
4	ՆՈՒՀ-ի կոշտ և փափուկ գույքի համալրում 45մ^2	1800,0
5	Ֆուտբոլի մարզադաշտի բարեկարգում, 400մ ցանկապատի կառուցում	1700,0
6	Ներհամայնքային 23-րդ փողոցի տուֆ քարով կառուցում 650մ^2	3250,0
7	Անուշավանի մշակույթի տան մարզադահլիճի նորոգում. հատակի հիմնանորոգում, կոսմետիկ վերանորոգում, մարզագույքի ձեռքբերում	2850,0
8	Ներհամայնքային գերեզմանատուն տանող փողոցի 900մ^2 տուֆ քարով կառուցում	4500,0
9	Նոր գերեզմանատան կառուցման համար հողհատկացման, տեղանքի հարթեցման, ցանկապատի կառուցման աշխատանքներ	6480,0
10	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում	1100,0
11	Համայնքապետարանի շենքի 2-րդ հարկի մի մասում որպես Արվեստի դպրոց վերանորոգում և կահավորում	2100,0
12	Դաշտամիջյան ճանապարհների նորոգում փոսալցումով և ջրահեռացման խողովակների անցկացում	5000,0
13	Համայնքային սեփականություն համարվող պտղատու այգու ցանկապատի կառուցում, ոռոգման համակարգի անցկացում, տնկիներով թարմացում	1700,0
	ՏԻՄ-երի լիազորություններից դուրս ծրագրեր	
1	ՆՈՒՀ-ի շենքի տանիքի փոխարինում ցինկապատ թիթեղով, 2-րդ հարկի դռների և պատուհանների փոխարինում, 2-րդ հարկի սենյակների կոսմետիկ նորոգում, հատակի լամինատապատում	30000,0
2	Արթիկ-Անուշավան 2,4կմ միջհամայնքային ճանապարհի	115200,0

	ասֆալտ-բետոնյա ծածկով հիմնանորոգում	
3	108քմ մակերեսով օրվա կարգավորիչ 2 ջրամբարների վերանորոգում	3800,0
4	1500մ ոռոգման ներքին ցանցի կառուցում 400մմ×400մմ×400մմ բետոնյա տաշտակներով	20000,0
5	2000մ 50մմ տրամագծով խմելու ջրագծի կառուցում	3800,0
6	Մանթաշի ջրամբարից փակ համակարգով 10կմ երկարությամբ մայր ջրատարի և 5,5կմ համայնքները սնուցող ոռոգման ջրատարի կառուցում	1 100 000,0
7	Վերականգնող էներգիայի շրջանակներում ֆոտովոլտային մարտկոցների տեղադրում	3500,0
8	Մշակույթի տան փոքր դահլիճում բնակչության կողմից սգո արարողությունների անցկացման համար տարածքի նորոգում և կահավորում	10000,0
9	Վարչական տարածքում գտնվող արոտների ջրարբիացում	9000,0
10	Գյուղտեխնիկայի(հացահատիկահավաք կոմբայն և հացահատիկի շարքացան) ձեռքբերում	35000,0

Աղյուսակ Անուշավան համայնքի ծրագրերի առաջնահերթությունների որոշում

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Գնահատման չափանիշներ (0-10 բալ)				Ընդամենը (բալ)	Ծրագրի առաջնահերթություն
			Շահառուների թիվ	Համայնքի կարիքությունների հզորացում	Իրատեսականություն	Իրատապություն		
1	Հակակարկտային կայանք 1հատ	3200,0	10	10	10	10	40	1
2	Ներհամայնքային 29-րդ փողոցի տուֆ քարով կառուցում 600մ^2	4000,0	10	10	10	9	39	2
3	Անուշավանի մշակույթի տան ժամանցի սենյակի նորոգում և կահավորում 1 սենյակ	500,0	9	9	10	9	37	3
4	ՆՈՒՀ-ի կոշտ և փափուկ գույքի համալրում 45մ^2	1800,0	9	8	9	9	35	4
5	Ֆուտբոլի մարզադաշտի բարեկարգում, 400մ ցանկապատի կառուցում	1700,0	7	8	8	7	30	9

6	Ներհամայնքային 23-րդ փողոցի տուֆ քարով կառուցում 650մ²	3500,0	8	9	8	7	32	8
7	Անուշավանի մշակույթի տան մարզադահլիճի նորոգում. հատակի հիմնանորոգում, կոսմետիկ վերանորոգում, մարզագույքի ձեռքբերում	2850,0	7	8	7	6	28	11
8	Ներհամայնքային գերեզմանատուն տանող փողոցի 900մ² տուֆ քարով կառուցում	4500,0	10	9	8	8	35	5
9	Նոր գերեզմանատան կառուցման համար հողհատկացման, տեղանքի հարթեցման, ցանկապատի կառուցման աշխատանքներ	6480,0	10	8	8	8	34	6
10	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում	1100,0	8	9	7	7	31	10
11	Համայնքապետարանի շենքի 2-րդ հարկի մի մասում որպես Արվեստի դպրոց վերանորոգում և կահավորում	2100,0	8	9	8	8	33	7
12	Դաշտամիջյան ճանապարհների նորոգում փոսալցումով և ջրահեռացման խողովակների անցկացում	5000,0	10	6	6	6	28	12
13	Համայնքային սեփականություն համարվող պտղատու այգու ցանկապատի կառուցում, ոռոգման համակարգի անցկացում, տնկիներով թարմացում	1700,0	6	6	7	6	25	13

Անուշավան համայնքի ոլորտային ծրագրերի առանձին ձևակերպումներն ըստ ոլորտային ծրագրի օրինակելի ձևի

Ծրագիր 01

Հակակարկտային կայանքի տեղադրում

(Ծրագրի անվանումը)

Տնտեսական հարաբերություններ (գյուղատնտեսություն)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 3200,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

- ✓ Հակակարկտային կայանք 1հատ

Ծրագրի հիմնավորումը

Կարկտահարությունից ցանքատարածաությունները կպաշտպանի 80-100հա-ի սահմաններում:

Ծրագրի նպատակները

Լրիվ կբացառի կամ կմեղմի կարկտահարության վտանգը համայնքի ցանքատարածքներում

Ծրագրի խնդիրները

- ✓ Հայտարարել մրցույթ և ընտրել կապալառուին
- ✓ Իրականացնել կայանքի տեղադրման աշխատանքներ
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել աշխատանքի կատարման ակտը

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2017թվականի հուլիս-սեպտեմբեր:

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Կարկտահարությունից կապահովվի 80-100հա ցանքատարածություններ:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

կայանքի ձեռքբերման 3200,0 հազար դրամ ծախսը ֆինանսասավորվելու է համայնքի միջոցների հաշվին:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

Ծրագիր 02

Ծրագիր 04

Ծրագիր 06

Ներհամայնքային 29-րդ փողոց 4000,0 հազար դրամ

Ներհամայնքային 23-րդ փողոց 3500,0 հազար դրամ

Գերեզմանատուն տանող փողոց 4500,0 հազար դրամ

(Ծրագրի անվանումը)

Տնտեսական հարաբերություններ (ճանապարհային տրանսպորտ)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 12000,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

- ✓ Կառուցում տուֆ քարով

Ծրագրի հիմնավորումը

Բնակչության համար ստեղծել բարեկարգ, ապահով, երկարաղիմացկուն ճանապարհներ:

Ծրագրի նպատակները

Համայնքի բնակչության համար ստեղծել բարեկարգ, տրանսպորտի և բնակիչների համար անցանելի ճանապարհ:

Ծրագրի խնդիրները

- ✓ Հայտարարել մրցույթ, հաղթող կազմակերպության հետ կնքել պայմանագիր
- □ իրականացնել վերահսկողություն կատարվող աշխատանքների որակի նկատմամբ

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2017թվականի հունիս-հոկտեմբեր՝ թիվ 29 փողոց:

2018թվականի մայիս-հուլիս՝ 23-րդ փողոց:

2019թվականի մայիս-օգոստոս՝ գերեզմանատուն տանող ճանապարհ:

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Ճանապարհը կծառայի երկար տարիներ, յուրաքանչյուր տարի չի կատարվի փոսալցման աշխատանքներ:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

թիվ 29, թիվ 23 և գերեզմանտուն տանող ճանապարհների տուֆ քարով 8100,0 հազար դրամ նախագծային արժեքով կառուցվելիք աշխատանքները ֆինանսասավորվելու է համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Պատասխանատու՝ 1-ին կարգի մասնագետ՝ Մ. Դավթյան:

Ծրագիր 05

Նոր գերեզմանատան կառուցման համար հողհատկացում, տեղանքի հարթեցում, ցանկապատի կառուցում

(Ծրագրի անվանումը)

Տնտեսական հարաբերություններ (գյուղատնտեսություն)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 6480,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

- ✓ կառուցում

Ծրագրի հիմնավորումը

Պետական չափանիշների համապատասխանող գերեզմանատուն կառուցելու համար անհրաժեշտ է տարածքը բարեկարգել, ցանկապատել :

Ծրագրի նպատակները

Քանի որ հին գերեզմանատներում որոշ ժամանակ հետո հնարավոր չի լինի կազմակերպել թաղումներ, անհրաժեշտություն կա նոր գերեզմանատան կառուցում:

Ծրագրի խնդիրները

- ✓ պատվիրել գլխավոր հատակագիծ
- ✓ Իրականացնել հողահարթեցման աշխատանքներ
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել աշխատանքի կատարողական ակտը

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2019թվականի հուլիս-սեպտեմբեր:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

6480,0 հազար դրամ ծախսը ֆինանասավորվելու է համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

Ծրագիր 03

Ծրագիր 07

ՆՈՒՀ-ի կոշտ և փափուկ գույքի համալրում՝ 1800,0հազար դրամ

ՆՈՒՀ-ի տանիքի և 2-րդ հարկի նորոգում՝ 30000,0 հազար դրամ

(Ծրագրի անվանումը)

Կրթություն (նախադպրոցական կրթություն)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 31800,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

- ✓ Վերանորոգում
- ✓ Կոշտ և փափուկ գույքի ձեռքբերում

Ծրագրի հիմնավորումը

Շենքը լրիվությամբ շահագործելու համար անհրաժեշտ է փոխել շենքի տանիքը, փոխել 2-րդ հարկի դռներն ու պատուհանները, նորոգել խմբասենյակներն ու ննջասենյակները:

Ծրագրի նպատակները

Անուշավանի մանկապարտեզի շենքը շահագործել ամբողջ հզորությամբ, որը թույլ կտա ավելացնել մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը ինչպես Անուշավան, այնպես էլ հարևան Գետափ համայնքից:

Ծրագրի խնդիրները

- ✓ Գտնել բարեգործական հիմնադրամներ:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2017թվականի մարտ-հոկտեմբեր:

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Կապահովվի Անուշավան և Գետափ համայնքների 120 երեխաների հաճախումը մանկապարտեզ:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

1800,0 հազար դրամ ծախսը ֆինանսասավորվելու է համայնքի միջոցների հաշվին,

30000,0 հազար դրամ ծախսը ֆինանսավորվելու է Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:

Պատասխանատու՝ ՆՈՒՀ տնօրեն Օ. Սարոյան:

Ծրագիր 08

Ծրագիր 09

Ծրագիր 10

Մշակույթի տան մարզադահլիճի նորոգում՝ 2850,0 հազար դրամ

Ֆուտբոլի մարզադաշտի ցանկապատում և բարեկարգում՝ 1700,0 հազար դրամ

Մշակույթի տան ժամանցի սենյակի նորոգում և կահավորում՝ 500,0 հազար դրամ

(Ծրագրի անվանումը)

Տնտեսական հարաբերություններ (գյուղատնտեսություն)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 5050,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

- ✓ բարեկարգում

Ծրագրի հիմնավորումը

Մշակույթի տունը շահագործվել է 1969թ-ին, կապիտալ և ընթացիկ նորոգման չի ենթարկվել: Համայնքում մշակութային կյանքը ակտիվացնելու համար անհրաժեշտություն կա մշակույթի տան հիմնանորոգում:

Ծրագրի խնդիրները

- ✓ Հայտարարել մրցույթ և ընտրել կապալառուին
- ✓ Իրականացնել աշխատանքներ
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել աշխատանքի կատարման ակտը

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2019թվականի հուլիս-սեպտեմբեր,

2020թվականի մարտ- օգոստոս,

2021թվականի մայիս-սեպտեմբեր:

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Երիտասարդության ժամանցը ակտիվ կազմակերպել, երիտասարդների շրջանում կանխել արտագաղթը:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

1850,0 հազար դրամ, 1100,0 հազար դրամ, 700,0 հազար դրամ ծախսը ֆինանսավորվելու է համայնքի

միջոցների հաշվին:

Պատասխանատու՝ 1-ին կարգի մասնագետ՝ Մ. Դավթյան:

Ծրագիր 11

Ծրագիր 12

2000գծմ խմելու ջրատարի կառուցում՝ 3800,0 հազար դրամ

Օրվա կարգավորիչ 2 ջրամբարների հիմնանորոգում՝ 3800,0 հազար դրամ

(Ծրագրի անվանումը)

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն (ջրամատակարարում)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 7600,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

- ✓ Կառուցում
- ✓ հիմնանորոգում

Ծրագրի հիմնավորումը

Բնակչության համար ապահովել շուրջօրյա ջրամատակարարում:

Ծրագրի խնդիրները

- ✓ ՎՕՍ բարեգործական կոորպորացիայի երևանյան գրասենյակի հետ կնքել պայմանագիր:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2017թվականի ապրիլ-հոկտեմբեր:

2018թվականի ապրիլ-հոկտեմբեր:

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Կապահովվի հարավային թաղամասի ջրամատակարարումը և ամբողջ համայնքի շուջօրյա ջրամատակարարումը:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

ՎՕՍ բարեգործական կոորպորացիայի երևանյան գրսենյակ՝ 6800,0 հազար դրամ,

համայնքի բնակչությոն ներդրում՝ 800,0 հազար դրամ:

Պատասխանատու՝ 1-ին կարգի մասնագետ՝ Ռ. Վարդանյան:

Ծրագիր 13

1500մ ոռոգման ներքին ցանցի կառուցում 400մմ×400մմ×400մմ բետոնյա տաշտակներով

(Ծրագրի անվանումը)

Տնտեսական հարաբերություններ (գյուղատնտեսություն, ոռոգում)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 20000,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

✓ Կառուցում;

Ծրագրի նպատակները

150հա տարածքներ կմտնեն ոռոգման տակ, կկարգավորվի համայնքի տնամերձ հողամասերում ոռոգման ջրի մատակարարումը, կավելանա մշակվող կուլտուրաների բերքատվությունը, կբարձրանա բնակիչների եկամոտները:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2017թվականի ապրիլ-նոյեմբեր:

Ծրագրի ակնկալվող արդյունքները

150հա տարածքներ կմտնեն ոռոգման տակ, կկարգավորվի համայնքի տնամերձ հողամասերում ոռոգման ջրի մատակարարումը, կավելանա մշակվող կուլտուրաների բերքատվությունը, կբարձրանա բնակիչների եկամոտները:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ՝ 10000,0 հազար դրամ

Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման՝ 7000,0 հազար դրամ

Համայնքային ներդրում՝ 3000,0 հազար դրամ:

Պատասխանատու՝ 1-ին կարգի մասնագետ՝ Մ. Դավթյան:

Ծրագիր 14

Ոռոգման փակ համակարգի կառուցում

(Ծրագրի անվանումը)

Տնտեսական հարաբերություններ (գյուղատնտեսություն, ոռոգում)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 1 100 000,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

✓ կառուցում

Ծրագրի հիմնավորումը

Ոռոգման ջրի պակասի հետևանքով չի օգտագործվում համայնքի հողային ռեսուրսները: Ոռոգման ջրի առկայության դեպքում համայնքում կարելի է զարգացնել բանջարաբուծությունը, կարտոֆիլի մշակությունը, պտղի արտադրությունը, կմեղմի գործազրկությունը:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2017-2021թվականներ:

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Կբարձրանա բնակչության զբաղվածությունը, եկամուտները:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

Հայաստանի Հանրապետության կառավարություն

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

Ծրագիր 15

Դաշտամիջյան ճանապարհների նորոգում փոսալցումով և ջրահեռացման խողովակների անցկացում

(Ծրագրի անվանումը)

Տնտեսական հարաբերություններ (գյուղատնտեսություն)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 5000,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

- ✓ նորոգում

Ծրագրի հիմնավորումը

Դաշտամիջյան ճանապարհի նորոգումը կապահովի տեխնիկայի անարգել երթևեկությունը առանց վնասելու ցանքատարածություններին:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2017-2018թվականներ:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

Համայնքի բյուջե:

Պատասխանատու՝ 1-ին կարգի մասնագետ՝ Ռ. Վարդանյան

Ծրագիր 16

Մշակույթի տան փոքր դահլիճում բնակչության կողմից սգո արարողությունների անցկացման համար տարածքի նորոգում և կահավորում

(Ծրագրի անվանումը)

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ ծառայություններ)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 10000,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

- ✓ վերանորոգում
- ✓ գույքի ձեռքբերում

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2017-2018թվականներ:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

անհատ ներդրող:

Պատասխանատու՝ 1-ին կարգի մասնագետ՝ Մ. Դավթյան

Ծրագիր 17

Համայնքի վարչական տարածքում գտնվող արոտների ջրարբիացում

(Ծրագրի անվանումը)

Տնտեսական հարաբերություններ (գյուղատնտեսություն)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 9000,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

- ✓ արոտ տանող չանապարհների նորոգում
- ✓ խմելու ջրագծերի անցկացում
- ✓ տաշտակներով խմոցների կառուցում

Ծրագրի հիմնավորումը

Արոտի սեզոնում անասուններին խմելու ջրով ապահովելու, արոտից դեպի գյուղ ճանապարհը կրճատելու համար: Կբարձրացնի անասունների մթերատվությունը:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2018-2019թվականներ:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

Գործընկերություն հանուն գյուղական համայնքների զարգացման՝ 7000,0 հազար դրամ,

Համայնքի բնակչության ներդրում՝ 2000,0 հազար դրամ:

Պատասխանատու՝ 1-ին կարգի մասնագետ՝ Ռ. Վարդանյան

Ծրագիր 18

Համայնքապետարանի շենքի 2-րդ հարկի մի մասում որպես Արվեստի դպրոց վերանորոգում և կահավորում

(Ծրագրի անվանումը)

կրթություն

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 2100,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

- ✓ վերանորոգում
- ✓ գույքի ձեռքբերում

Ծրագրի հիմնավորումը

Համայնքից դպրոցահասակ երեխաներ երաժշտության կամ կերպարվեստի դասեր առնելու համար հաճախում են հարևան համայնքներում գործող արվեստի դպրոցներ: Անուշավանի համայնքապետարանի 2-րդ հարկում կա համապատասխան ազատ տարածք, որը վերանորոգումից հետո կծառայի որպես արվեստի դպրոց:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2018թվական մարտ-նոյեմբեր ամիսներ:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

Համայնքի բյուջե՝ 2100,0 հազար դրամ:

Պատասխանատու՝ 1-ին կարգի մասնագետ՝ Ռ. Վարդանյան

Ծրագիր 19

Գյուղտեխնիակյի (հացահատիկահավաք կոմբայն և հացահատիկի 2 շարքացան)ձեռքբերում

(Ծրագրի անվանումը)

Տնտեսական հարաբերություններ (գյուղատնտեսություն)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 35000,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

- ✓ կոմբայնի ձեռքբերում 1հատ
- ✓ շարքացան 2հատ

Ծրագրի հիմնավորումը

Համայնքում շահագործվող գյուղտեխնիկան խորհրդային շրջանի ցածր արտադրողական, ֆիզիկապես և բարոյապես մաշված տեխնիկա է: Գյուղատնտեսությունը համայնքում զարգացնելու համար անհրաժեշտություն կա տեխնիակյի պարկը թարմացնելու և վերազինելու ավելի բարձր արտադրողակն տեխնիկայով:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2018թվական:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

Ծրագիր 20

Համայնքային սեփականություն համարվող պտղատու այգու ցանկապատի կառուցում, ոռոգման համակարգի անցկացում, տնկիներով թարմացում

(Ծրագրի անվանումը)

Տնտեսական հարաբերություններ (գյուղատնտեսություն)

(ոլորտի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 1700,0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝

- ✓ 300մ ցանկապատի կառուցում
- ✓ Ոռոգման համակարգի անցկացում
- ✓ Տնկիների ձեռքբերում:

Ծրագրի հիմնավորումը

Համայնքի սեփականություն համարվող այգում, որը հիմնվել է 1950-ական թվականներին, հնդավոր, հիմնականում տանձի և խնձորի ծառեր են, որոնց մեծ մասը արդեն կարիք ունեն փոխարինվելու նոր, ավելի արդյունավետ ապրանքային սորտերով:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2019թվական:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրը

համայնքի բյուջե՝ 1700,0 հազար դրամ:

Պատասխանատու՝ 1-ին կարգի մասնագետ՝ Մ. Դավթյան